

թիւն կանոնս աշակերտելոցն դնել. մանաւանդ յուշ առնելով զՏեառն հրամանն *Քանզի սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել*^բ:

59 Քանզի եւ առաւել աւգտակար իսկ է՝ յամենայն զբաւսանաց աշխարհի, առանձինս սահմանել զկիրս եւ միայն աստուածապաշտութեան պարապել, զոր եւ մարգարէքն յառաջագոյն գործէին, որք ի լերինս եւ յանապատս, եւ ի յայրս եւ ի փապարս վիմաց՝ աստուածօժեղէն կրանիցն զծառայութիւնսն հարկանէին:

60 Նոյնպէս եւ ամենայն հարքն՝ որ յաշորդեցան յառաքելական կանոնացն գրեալ, անձամբք զլաւութիւն բերէին վերջնոցն աւրինակ. ուստի երանելիս այս բարձեալ տաներ զաւանդելոցն պատիւ:

61 Յայնմ ժամանակի բերեալ երեւեցան ի Յայաստան աշխարհիս գիրք սուտապատումք, ընդունայնախաւսք ասանդութիւնք առն հռոմի, որում Թեոդոս անուն: 62 Վասն որոյ սինհոդոսական հայրապետացն՝ եկեղեցւոյ սրբոյ նշանակեալ ազդ առնէին՝ ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ եւ Մեսրոպայ: 63 Եւ նոցա ճշմարտասեր փութով զայն ի միջոյ բարձեալ՝ աշխարհա[հալա]ծ արտաքոյ իւրեանց սահմանացն մերժէին. զի մի ի լուսաւոր վարդապետութիւնն՝ ծուխ ինչ սատանայական յարիցէ:

64 Յետ այնորիկ դէպ լիներ նովին ճշմարտութեամբ՝ երանելոյն Սահակայ լցեալ աւուրքք երկայնակեց ժամանակաւք, եւ վայելեալ աստուածօժեղէն պտղոյն բարութեամբք, յառաջնումս ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ՝ թագաւորի կացելոյ Պարսից աշխարհին, ի Բագրաւանդ զաւառի՝ ի գիւղ Բլրացւոց, ի կատարել ամսոյն Նաւասարդի, որպէս զար ծննդեան երանելոյն զնոյն համարեալ յիշէին. յերրորդ ժամու աւուրն, պաշտաման զաւուշ ոգին հանդերձ աստուածահաճոյ աղաւթիւք՝ ծերունոյն ի Քրիստոս ասանդեալ. հայեցեալ մարգարէին, որ ասէ *Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ*^ա:

ԵՒ ՎԱՍՆ ՄԱՅՈՒԱՆ

ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՊԱՅ

1 Իսկ երանելոյն Մեսրոպայ բազում անձկայրեաց տրտմութեամբ եւ արտաւարակաթ ողբովք եւ ծանրաթախիծ սգովք պաշարեալ դներ: 2 Բայց թէպէտ եւ միաւորութեան տրտմութիւն չթողոյր զուարթանալ, սակայն զաւետարանական ընթացսն, եւ զվերակացութիւնն եկեղեցոյ սրբոյ շնորհաւքն Աստուծոյ առանց պակասութեան տաներ: 3 Եւ զգայգ եւ զգերեկ աղաւթիւք եւ ուժգին ինդրուածովք եւ բարձրագոյն բարբառով զաստուածադիր հրա-

^բ Գործ. Ա 1

^ա Սաղմ. Լ 6